**IV**

**(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)**

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը*

## Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԱՐԵՎ, ԼՈՒՅՍ, ԿԱՍԿԱԴ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի՝ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ծանուցմամբ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի և <<ԱՐԵՎ, ԼՈՒՅՍ, ԿԱՍԿԱԴ>> ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 15-ին կնքված <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-23/5 պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՀԱՊՀ-2023/6 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ**